

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԻՑԱՐԱՆԸ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ԴԻՑԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Վ. Մ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Աստվածաշնչում, ինչպես նաև վաղմիջնադարյան հայ պատմիչների հաղորդած տեղեկություններում մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհում ձևավորված հայկական պետությունը Արարատյան թագավորություն անունով է կոչվում, իսկ ժամանակի աստուրական արձանագրություններում այն ներկայացված էր Ուրարտու անվան տակ: Սակայն Վուրարտական թագավորները Ուրարտու անունը չեն գործածում նույնիսկ ասուրերին գրված իրենց արձանագրություններում: Սարգուրի I-ը ասուրերին արձանագրության մեջ իր երկիրը նախի է կոչում: Նրա որդին՝ Իշպուհին, գործածում է նույն անունը Կելշիի արձանագրության ասուրերին տարբերակում¹:

Ներկայումս չճշտված լեզվաբնականի պատկանող և հնդեվրոպականի հետ նոստրատիկ ցեղակցական վապ տնեցող լեզվով գրված արձանագրություններում² երկիրը տրված է Բիաինա անվան տակ. «Ուրարտացիները իրենց կոչել են biainili, իրենց երկիրը՝ Biaina... Այս անունը պահպանվել է Վան (սեռ. Վանա) անվան մեջ»³:

Հնագույն ժողովուրդների կրոնական հավատալիքների վերածությունը ցույց է տալիս, որ նրանց միջև կան նմանության բազմաթիվ դժեր: Դրանք իրենց արտացոլումը պետք է գտնենք նաև Հայկական լեռնաշխարհի բնակիչների մեջ, որոնց զբաղեցրած տարածքը զանազան էր հինավուրց քաղաքացրթությունների փաշմերուկում: Համեմատական ղիցաբանության մեթոդի կիրառման շնորհիվ նմանության դժեր են մատնանշվում հնագույն հայերի գլխավոր Հայկ աստծո, աստուրա-բաբելական Բելի, հունական Օրիոնի, սկանդինավյան Օդինի և այլոց միջև: Հայկի մասին պատմությունները ակնհայտ զուգահեռներ են դրսևորում հրեական Դավթի և Գողթիաթի, իրանական Շահնամի մեջ՝ Սամի և Քերքուրի, շվեյցարական Տելի մասին ավանդազրույցների հետ: Զևսի կոթիլը տիտանների կամ գիգանտների դեմ պատմված է հղել նաև Արգայոս լեռան շրջանում: Այդ կողմերում ապրող արիմները այդ առասպելը վապել են իրենց նախնու՝ Արիմի անվան հետ, իբրև կոթիլ տիտանների կամ գիգանտների դեմ: Հետագայում Արիմ անունը դարձել է Արամ⁴: Մասնագետները Տուրք աստծու անունը նմանեցնում են խեթական և միտանական ցեղերի Տարկու, Տարքու կամ Տուրգու դիցանուններին⁵: Անահիտ աստվածուհին նմանության դժեր ունի հունական Ափրոդիտեի, աստուրա-բաբելական Միլիտա կամ Իշտար, փյունիկյան Աստարթ, Դերկեստ և այլ աստվածուհիների հետ: Նմանության ակնհայտ դժեր են դրսև-

1 Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն (այսուհետև՝ Հայաստանի պատմություն), Երևան, 1972, էջ 215:

2 Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ Հայոց լեզվի պատմություն), Երևան, 1987, էջ 417, 422:

3 Նույն տեղում, էջ 427:

4 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ., Երևան, 1968, էջ 31—32:

5 Նույն տեղում, էջ 36:

6 Նույն տեղում, էջ 38:

սխալմամբ նաև հայոց Վահագն, իրանական Վերեթրագնա և հնդկական Ինդրա աստվածությունների միջև⁷:

Միանգամայն բնական է, որ վրոնական հավատալիքների նմանօրինակ լրնդհանրություններ գոյություն են ունեցել մ. թ. ա. I հազարամյակում: Գ. Զահուկյանը նշում է, որ Արարատյան թագավորության դիցարանում «...ուրարտական ածանցի առկայությունը չի նշանակում հիմքի պարտադիր առարտական ծագում»⁸: Ըստ այդմ, նա հայերենով ստուգաբանվող աստվածություններ է նշում՝ 1. Aršbedini-ն, 2. Šelardi-ն, 3. Šinulardi-ն, 4. Atralni-ն, 5. Alaptušini-ն, 6. Aštuzzi-ն, 7. Tardini-ն՝ 8. Ariu'ar/a/si-ն, 9. Ztuquni-ն, 10. Tuxani-ն: Այս ցանկը կարելի է լրացնել հետևյալներով 11.

Elil/a/ դիցանունը կարելի է կապել բնիկ Կարենի հ.-հ. Ելիլի/արմատի հետ ևել, ի հլ անհրաժեշտ դուրս գալ՝ Սգր. «վեր բարձրանալը ... արևի ծագում ևս...», որից ելանել (կտ.ելի, հրմ.ել) «դուրս գալ, ծագել...»⁹: Ելնելով հայերեն ել(ի) արմատի իմաստից, կարելի է ասել, որ Elia-ն հանդիսացել է արևածագի, արշալուսի աստվածուհին (հույների մոտ՝ Էոս):

12. Գ. Զահուկյանը Ալլ (Ավի) դիցանունը հնարավոր է համարում կապել հայերեն հաւ «պապ» (*au-os) բառի հետ¹⁰: Նշենք, որ կարելի է այն կապել բռնի «աւ» արմատի հետ. «Աւիլ, փնորիլ, խենթանալ». այս բառից ունենք միայն աւեալ... պարզ արմատ է աւ, որից կազմված են նաև աւանդող «ցնորած, մոլեգնած»¹¹: Հռոնական դիցարանում այս իմաստով հանդես է եկել Ատեն. «Ատեն» հուն.-մարդու և աստվածների բանականությունը մթագնող ակնթարթային խելագրկության նույնիսկ անձնավորումը¹²: Այսպիսով, կարելի է ասել, որ Ավը (սեռ. Ավի) հնարավոր է, որ հանդիսացել է հնագույն հայերի խելագրկության նույն առաջ բերող աստվածությունը:

13. Գ. Զահուկյանը խեթական անվանմամբ Šilili հայաստական դիցանվան հիմքը համարում է սիլ-ը, փակ -i(li)-ն նշում որպես ածանց, որը հանդիպում է տեղանունների, աստվածների և ժողովուրդների անունների վերջում: Նա ափսոսանքով հիմքը կապում է հ.-հ. *sel-» բարեհաճ, բարյացակամ¹³: կամ *šēli «սիրահարված, նվիրված» արմատների հետ: Հայերենում սիլեզ, սեղեխ բառերը՝ «սիրեկան» իմաստով կապվում են սեղ արմատի հետ¹⁴:

Վանի պետության դիցարանի Šilia դիցանվան հիմքը նույնպես կապվում է վերոհիշյալ արմատների հետ. վերջում առկա է ուրարտերենի բնորոշ -ia («ուհի» իմաստով) վերջածանցը: Զահուկյանը նշում է նաև ուրարտերենի բնորոշ ր/լ հերթագայության մասին. «...ուրարտական բարբառներում առկա է եղել ր/լ հերթագայությունը վամ ըստ հայերի արտասանական առանձնահատկությունների ր-ն և լ-ն ընկալվել են ոչ այնքան հստակ տարբերակված»¹⁵: Այսպիսով վարելի է ասել, որ Šilia դիցանունը հնարավոր է կապել նաև բուն հայերեն սէր արմատի հետ և նորան վերագրել սիրտ և բարության դիցուն-հու բովանդակություն (հույների մոտ՝ Ափրոդիտե):

⁷ Նույն տեղում, էջ 45:

⁸ Գ. Զահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում [(այսուհետև՝ Հայկական շերտը ուրարտական դիցարանում), Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 1, էջ 46]:

⁹ Զ. Ահառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև ՀԱԲ), հ. 2, Երևան, 1978, էջ 8:

¹⁰ Հայոց լեզվի պատմություն, էջ 444:

¹¹ ՀԱԲ, հ. 1, Երևան, 1971, էջ 360:

¹² Մ. Բոտվիննիկ և ուրիշներ, Դիցարանական բառարան, Երևան, 1985, էջ 29:

¹³ Г. Д ж а у к я н, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, с. 49:

¹⁴ Հայոց լեզվի պատմություն, էջ 329:

¹⁵ Նույն տեղում, էջ 432:

14. *Barsia* դիցանվան և հայերեն բարձ «պատվի աստիճան» բառի միջև կապը պետք է ակնհայտ համարել, քանի որ *S*-ն կարող էր արտահայտել նաև հայերեն ձ-ն¹⁶։ Հավանորեն Բարձիան հանդիսացել է պատվի, արժանապատվության հայոց հնագույն աստվածուհին, որի կողմից նախօրոք կանխորոշվում էր յուրաքանչյուր մարդու գրավելիք դիրքը (բարձր) և պատվի աստիճանը հասարակության մեջ։ Հավանաբար, հնագույն հայերը հասարակության մեջ խրենց գրաված դիրքի, պատվի բարձրացման հարցերով դիմում էին այս աստվածուհու օգնությանը։ Հունական դիցարանում նրա նմանակն էր Հոնորը։

15. Դիցարանում տեղ գտած *Erina* դիցանունը հայ. «արյուն» բառի բարբառային տարբերակն է։ «Արին Սգր. «սպանություն, կոտորած»... աղ-դակցություն, արենակցություն, ազգական... Գիւ.-Ասլ. արին... Զթ. էրին, էրին...»¹⁷։ Ինչպես տեսնում ենք, արյուն բառի Զեյթունի բարբառային տարբերակը ճշտորեն պահպանել է դիցարանում տեղ գտած էրին(ա) դիցանունը։ Հռոմեական լեռնահայերի իմաստային բովանդակությունը մեծապես օգնում է էրինա դիցանունը բուն հայկական միջավայրի հետ կապելու հարցում։ «Սկզբնապես է., ըստ երևույթին համարվել են սպանված ազգականներին վրեժի փոշող հոգիներ, որոնք հալածում էին նրանց, ուրքեր չէին կատարում տոհմական վրեժի օրենքները»¹⁸։ Հայերենում արյուն բառի էրին բարբառային տարբերակի գոյությունը, նրա նաև «ազգական, ազգակցություն, արենակցություն» և «սպանություն» իմաստներով գործածվելը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ էրինան բուն հայկական դիցարանի ներկայացուցիչ է հանդիսացել, քանի որ նրա իմաստային բովանդակությունը ավելի լիարժեք և ճշտորեն տողաբանվում է հայերեն հիմքերով։ Հռոմեական հեթանոսական աստվածություններով զբաղվող ժամանակակից մասնագետները (Աբելյան, Բոտվիննիկ) նշում են նրանցից շատերի (նույն-իսկ գլխավորների) նախնական, փոքրասիական թնույթը։

Ջահուկյանը փոխառության աղբյուրը չպարզված դիցանունների շարքն է դասում՝ 16. *Araza* 17. *Arin* և 18. *Zuzumaru* աստվածությունները։ *Araza* դիցանվան կապակցությամբ Ջահուկյանը նշում է, որ այն «...հայկական տոմարի 6-րդ արաց ամսի անունն է... բուն հայկական դիցաբանի անդամ...»¹⁹։ Ղափանցյանը փորձում է այս դիցանունը կապել հայերեն «արածել» բառի հետ, որ չի ընդունում Ջահուկյանը։

Նշենք, որ այս դիցանունը կարելի է կապել հայերեն «արած» արմատի հետ. («Արած (ի, ո հլ.)- վերքի, մանավանդ բորոտության նշան, սպի, կեղ. որ երևում է մորթի վրա՝ հիվանդություններից առաջ կամ մնում հիվանդություններից հետո... նույնն է արածել «ճարակիլ, խոտ տալիլ, բառի հետ. վարակիլ վերքերի անունները շատ անգամ ծագում են «տալիլ» գաղափարից»²⁰։ Այսպիսով, Արածային կարելի է վերագրել մարդկանց հիվանդություններ առաքող աստվածության փմաստային բովանդակությունը կամ այլ կերպ՝ հնագույն հայերը նման հիվանդություններով, մանավանդ, բորոտությամբ վարակվելիս դիմել են այս աստծո օգնությանը (լատինական նմանակը կրում էր Ֆերդիս անունը)։

Ջահուկյանը հնարավոր է համարում *Zuzumaru* դիցանունը կապել «ծուծոյ» և «մարդ-մեծ» (հ.-ե, **me-ro-* «մեծ») արմատների հետ²¹։

Հռոմեական դիցարանում գոյություն է ունեցել Ռումինիա անունը կրող աստվածուհի. «Ռումինա, լատ.-մայրական վրժապատուկների աստվածուհի

16 Նույն տեղում, էջ 431, 519։

17 ՀԱԲ, հ. 1, էջ 317։

18 Մ. Բ ո ս վ ի ն ի կ... և շվ. աշխ., էջ 89։

19 Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 33։

20 ՀԱԲ, հ. 1, էջ 293։

21 Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 53։

(պատ. ոռամիս-պտուկ), ծծկեր մանուկների հովանավոր»²², Կարելի է ենթադրել, որ նմանօրինակ բովանդակությամբ հանդես է եկել Մուծոմարո աստվածուհին:

Ջահուկյանը փոխառությունների մեջ է դասում հայ. բաբայ-«բլուր» և ուրարտ. baba-«խեռ» բառերը, ըստ այդմ էլ, Կարելի է ընդունել, որ՝ 19. Baba (չեռան) և 20. Babarunay (լեռների) աստվածությունները համընդհանուր բնույթ են կրել, Հունական դիցարանում գոյություն են ունեցել լեռների մի շարք աստվածություններ:

21. Մովսի հնդեվրոպական անունը հայերենում պետք է տար *մոր կամ *մոր ձևը: Մեզ թվում է, որ ծովի բուն հնդեվրոպական ձևերը հայերենում կորել են մ. թ. ա. I հազարամյակում և դիցարանի հստակ դիցուն հայերենում հավասարապես հայկական միջավայրին ևս վերագրել, քանի որ մոտ հազար տարի հետո էլ այս աստվածուհին՝ Մովսիսար անունով, հայերի ամենախորված և հարգված աստվածուհիներից մեկն էր:

Ջահուկյանի վերջինգ ենթադրաբար տրվող հայկական աստվածություններն են՝ 22. Aia-ն 23. Ainae-ն 24. Talapura-ն 25. Eliburi-ն 26. Qilibani-ն 27. Jphari-ն 28. Jmušni-ն: Ainae դիցանունը նա մեկնաբանում է որպես «այնի, իմա հայերի»՝ աստված և ենթադրում, որ նրա տակ նկատի է առնված Հայկը²³: Նույն կերպ, «հ»-ի բարբառային հնարավոր անկումը կամ սեպագրային անտեսմամբ, Aia դիցանունը Ջահուկյանը տալիս է Հայա տեղեկով՝ տե՛ս նաև, սեպագրերում հանդիպող Halgi Aldi և ձևերը, հնագույն հայերենով այն ստուգաբանելով որպես «տիրուհի»՝ la ասանցը «տի» իմաստով²⁴:

Հոռմեական դիցարանում Հոռման հանդիսացել է այդ պետությունն անձնավորող աստվածուհին²⁵: Արդյոք հնարավոր չէ՞ ենթադրել, որ խեթերի կողմից մ. թ. ա. II հազարամյակում նշված Հայասա պետության մեջ գոյություն է ունեցել բուն Հայա անունով աստվածուհի, որն էլ գուցե եղել է այդ պետությունը անձնավորող դիցուն, չնայած նման վարկածի համար առայժմ հավաստի տեղեկություններ չեն հայտնաբերվել: Այնուամենայնիվ, ներկայումս էլ կարելի է պնդել, որ Հայա-ն Վանի պետության դիցարանի մեջ ներկայացրել է բուն «հայ» անունը կրող ցեղերին, որոնք Վանի շրջանում Հայադի և Հայդու անունները կրող երկու նահանգ էին զբաղեցնում:

Այսպիսով, հայ ժողովրդի ինքնանվանման ծագման գոյություն ունեցող տարբերակներին կարելի է ավելացնել ևս մեկը. «հայ» անվան նախնական՝ Հայա աստվածուհու անունից ծագած լինելու մեր վարկածը: «Նվիրոք. ժողովուրդների անվանումները կարող են կապված լինել ամենատարբեր իմաստների հետ և նշանակել մարդկային, ֆիզիկական ու բարոյական հատկություններ... դիցաբանական ու կրոնական հատկացություններ... Հարցը բարդանում է նաև այն պատճառով, որ էթնիկական անունը կարող է կապված լինել որևէ հատուկ անձի կամ վայրի հետ...»²⁶:

Ջահուկյանը Eliburi դիցանունը տալիս է «ելաբեր, գոյաբեր» իմաստներով: Նշենք, որ հայերենը պահպանել է ելուստ «բույսի աճ» և եղբորոս (կամ երուրոս) «մի տեսակ բույս» բառերը: Ելնելով այս դիցանվան առաջին արմատի՝ «ներսից դուրս գալ, վեր բարձրանալ, ծագել» հայերեն իմաստներից, այս աստվածությանը կարելի է վերագրել հետևյալ իմաստային բովանդակությունը: Հնագույն ժողովուրդների մեջ գոյություն է ունեցել պատ-

²² Մ. Բոտվիննիկ..., նշվ. աշխ., էջ 214:

²³ Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 46:

²⁴ Նույն տեղում, էջ 54:

²⁵ Մ. Բոտվիննիկ..., նշվ. աշխ., էջ 46:

²⁶ Հայոց լեզվի պատմություն, էջ 280:

կերացում, որ բուսական աշխարհի առաջացումը, բույսերի ծլարձակումը, նրանց աճելը, վեր բարձրանալը կատարվել է երկրի աչքն աստվածությունների միջոցով, որոնք ստորգետնյա աշխարհի հետ հաղորդակիցներ են եղել: Հունական դիցարանում խթոնիկ (երկրի) աստվածություններն էին Դեմետրան, Գեան²⁷ և այլն: Հայոց դիցարանում երկրի աստվածության պառտականությունները դրված է եղել Ելարեր աստվածության վրա:

Ainaue դիցանունը կարելի է կապել նաև հայերենում պահպանված «աչն-ջրի» ակունք, գետ, հոսող²⁸ արմատի հետ և նրան վերագրել ջրի ակունքների, գետերի հովանավոր աստվածուհու իմաստ:

Talapura դիցանունը Զահուկյանը մեկնում է Թաղատր/Թաղաբեր տեսքով՝ և նրան վերագրում Թաղումների, հուղարկավորության աստվածության իմաստային բովանդակություն, իսկ Qilibari դիցանվան Qill «կեղ-վերք, կեղել-տանջել» իմաստներից ելնելով, նրան վերագրում է տանջանքների աստվածության իմաստային բովանդակություն²⁹: Jp̄hari դիցանունը կապվում է «...ուրատ. րի (ս)-ջարդել, փշրել, հայ. փուխը բառի հետ»³⁰, Հնագույն հայերենում րի փուխը «փխրեմ, փշրեմ» իմաստով բառ է եղել, յնչպես «ի քարշ», «քարշեմ», «ի տեղի», «ի վեր» և այլ բառերը: Հայերենի «ի» նախդիրը հնդեվրոպական ծագում ունի: րի փխուր աստվածությանը կարելի է հողի փխրեցման (երկրագործական) կամ հացահատիկի փշրման (լատ. Պիլումն)³¹ հետ կապված իմաստներ վերագրել:

Զահուկյանը Jrmnšini դիցանվան մեջ առանձնացնում է հայերեն «սին» «սնել» բաղադրիչը: Հայերենը չի պահպանել ծովի հնդեվրոպական ուրեշ անվանում, ավելի տարածված *uorimori՝ անվանումը առկա է Եվրոպայի հնդեվրոպական լեզուներում և հայերենում պիտի տար *մոր կամ *մուր ձևը...»³², Հ.-Բ. *mor-ից հայերենում ունենք և՛ *մորշ, և՛ մոր ձևերը, յնչպես նաև «մուրշիկ»-ից «մուշիկ» ձևը: Jrmnšini դիցանվան մեջ mu-«մու, մո»-ն արդյոք հնարավոր չէ՞ նույնպես դիտել ծովի հայերեն բառի պահպանված անվանումը՝ «ր»-ի հնարավոր անկմամբ: Նշենք, որ «r» բաղադրիչի մեջ հնարավոր է «հ»-ի բարբառային անկում կամ սեպագրային անտեսում և դիցանունը ամբողջապես ներկայացնել Հիմնորային տեսքով: Հայերենում «հի»-ը ունի «երկնագույն, հակինթագույն» իմաստը³³, այնպես որ ողջ դիցանունը նման ստուգաբանության դեպքում ընդունում է «երկնագույն ծովով սնվող» աստվածության իմաստ: Հնագույն դիցաբանական պատկերացումներում նման բովանդակությամբ հանդես է եկել ծիածանի աստվածուհին (հույների Իրիսը):

Բուն հափկական աստվածների ցանկը կարելի է ըրացնել հետևյալներով՝ 29. Adia դիցանունը իր ad-արմատով կապվում է նաև հայերեն բարբառային թղե- -«հայր, մայր» բառերի հետ³⁴, ստանալով ծնողների (կամ մայրության) հովանավոր աստվածուհու իմաստային բովանդակություն: 30. Arubani (Uarabani) դիցանունը ևս հնարավոր է կապել հայերեն հիմքերի հետ, նրա մեջ առանձնացնելով Aru(Uaru) և ban արմատները: Վերջինս հայերենում ունի և՛ «խոսք», և՛ «իր, գործ, գործել» իմաստները: Առաջին արմատի «առու» ընթերցման հնարավորության դեպքում նրա էությունը հանգում է ջրամեջքաշինության հովանավոր աստվածուհու իմաստային բովանդակու-

27 Մ. Բ ո տ վ ի ն ն ի կ..., նշվ. աշխ., էջ 57, 49:

28 ՀԱԲ, հ. 1, էջ 170:

29 Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 54:

30 Հայոց լեզվի պատմություն, էջ 434:

31 Մ. Բ ո տ վ ի ն ն ի կ..., նշվ. աշխ., էջ 201:

32 Հայոց լեզվի պատմություն, էջ 259:

33 Նույն տեղում, էջ 436:

34 Նույն տեղում, էջ 451:

սարիք, սարդ)⁴³, «սարիք, սարդ և սարել «մանել» (հ.-հ. *Kīr-)»⁴⁴, Այս-պիսով, Սարդի դիցունհուն կարելի է համարել հայոց մանածագործության, ջուհակության աստվածուհի. հունական դիցաբանության մեջ կրում էր Աթենաս անունը, որին մրցման էր հրավիրել Արաքսեն (հուն. սարդ)⁴⁵, Դիցանվաճի sag արմատը կապվում է նաև հ.-հ. k'er արմատից թխող հայ. սար «գազաթ, բարձունք, լեռան» բառի հետ⁴⁶: Այս դեպքում Sardi-ի բովանդակությունը հանգում է բարձունքների, լեռների աստվածության գաղափարին: Կարելի է ասել, այս դիցանունը պահպանվել է Հայոց Սարդեան քաղաքանվանման մեջ:

35. Ardi աստվածությանը որոշ ուսումնասիրողներ ար-արևի տի՝ աստված իմաստով են մեկնաբանում⁴⁷ (Շիվիների կողքին ևս մեկ, բուն հայկական բնույթի արևի աստվածություն. հունականը՝ Ապոլլոն, Հելիոս, Փոյքսոս): Այս դիցանունը կարելի է կապել նաև հայ. արդ «ձև, վարձավորություն, սարք»⁴⁸ իմաստներ ունեցող բառի հետ և հունական Հորանների նման⁴⁹ նրան վերագրել բնության և հասարակության մեջ կարգ ու վստահության տող և տնօրինող աստվածության իմաստ (տե՛ս նաև արդու՝ շափի միավոր):

36. Հեթանոսական միևնույն աստվածությունները մերթ իգական, մերթ արական տեսքով են ըմբռնվել: Դիցարանում տեղ գտած Ar'a իգական քնույթի աստվածությունը հնարավոր է, որ եղել է հայոց քնության մեծնող և հարություն առնող աստվածության առավել հնագույն տարբերակը, որը հետագայում Արա Գեղեցիկ արքայի հետ կապված պատմությունների աղ-դեցության տակ արական բնույթ է ստացել:

37. Šiniri դիցանունը կարելի է կապել հայ «շին» արմատի հետ, որը ունի «շինվածք, գյուղ» և «կերտել, շինել» իմաստները⁵⁰ և նրան վերագրել շինների, բնակավայրերի կամ շինարարական աշխատանքների հովանավոր աստծո իմաստ:

38. Aršuniuni պատճենում՝ Aršuni դիցանունը կապվում է արծն-ել «տաք երկաթով փորագրել», արծարծել «կրակը բորբոքել»⁵¹ բառերի հետ: Արծունի դիցանունը կարելի է վերագրել դարձնության հետ կապված աստծո իմաստալի բովանդակություն:

Ակներևորեն հայերեն հիմքեր են պարունակում՝

39. Hutiuni-ն (խության) հայ. խութ (հնագույն՝ խութո) «ծովածայր (քար), այր, անձավ, խոչընդոտ» արմատից. իմաստը՝ նավեր խորտակող ծովային աստվածություն (հունականում՝ Սկիրլա և Քարիբդիս)⁵², ստորջրյա խութերի և ջրապտույտի մարմնավորումը:

40. Aršimel(a)-ն մեղունների արծաթավուն տիրուհին. հնագույն շրջա-նում արծաթավուն կերպարը շատ աստվածների բնորոշիչն է հանդիսացել կամ եղել է նրանց բեղմնավոր աշխատանքին արծ՝ եռանդ, հաղորդող դի-ցունհի (հունականում՝ Մելիտա)⁵³:

41. Ura-ն. հայերենում պահպանվել է «ուրա» բառ, որը, համաձայն Աճառյանի, բնիկ հայերեն հ.-հ. բնույթի արմատ է, որը եղել է «ծիսական

⁴³ Հայոց լեզվի պատմություն, էջ 54:

⁴⁴ Նույն տեղում, էջ 256:

⁴⁵ Մ. Բոտվիննիկ, նշվ. աշխ., էջ 33:

⁴⁶ Հայոց լեզվի պատմություն, էջ 54, 406:

⁴⁷ Մ. Գավուբջյան, Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Բեյրութ, 1973, էջ 107:

⁴⁸ Հայոց լեզվի պատմություն, էջ 216:

⁴⁹ Մ. Բոտվիննիկ, նշվ. աշխ., էջ 145:

⁵⁰ Հայոց լեզվի պատմություն, էջ 538, 573:

⁵¹ ՀԱՐ, հ. 1, էջ 319:

⁵² Մ. Բոտվիննիկ, նշվ. աշխ., էջ 223:

⁵³ Նույն տեղում, էջ 153:

մի բանաձև, որն ունենր աղոթքի, տնեծքի, աղերսի» փմաստ⁵⁴, Հունական դի-
ցարանում նման փմաստով աստվածությունը կրում էր Պեան⁵⁵ անունը:

42. Unina-ն «ն» հոդով հայ ունիմ (հ.-հ. օր-ո-արմատից) «ունեց-
վածք, ձեռք բերել, հարստություն» բառից. հարստության, առատության աստ-
վածություն⁵⁶:

43—61. Haldi. դիցարանի դերադույն աստվածը, բոլոր աստվածների
առաջնորդը, որի սրբավայրերը սփռված էին Հայկական լեռնաշխարհով մեկ.
«...նշված Կանոնադրության մեջ հալդիի անունը տառնինն տեղամ հիշա-
տակվում է զանազան առումներով»⁵⁷: Այդ աստվածությունները բնորոշում
էին դիվալոր աստծու տարբեր հատկություններն ու պարտականությունները:
Դիցարանի երկրորդ di արմատը հայ. «աստված» փմաստն ունեցող բառն
է: Բուն «խալ» արմատի հետ կապված հայերենը պահպանել է «խալամ-
դազաթն-կառափն-գանգ(կ)»⁵⁸, իսկ խեթերենը՝ խալանթա «գլուխ» բառերը:
Ելնելով սեպագրերին բնորոշ վր և խ/հ բարբառային տարբերակներից, այս
աստծո անվան հաշվով կարելի է նշել նաև Հարդի (հարդի) ընթերցման
հնարավորությունը: Միաժամանակ, հայերեն բառերի համար բնորոշ է նաև
ր/յ հնչյունափոխությունը⁵⁹, որից էլ՝ դիցարանի Հայդի տարբերակի հնարա-
վոր դոլությունը (տե՛ս նաև հայերենում պահպանված Հայդիկ անձնանու-
նը)⁶⁰: հալդի-Հայդի-Հարդի և այլ բարբառային տարբերակները հնագույն
հայերենում ունեցել են փմաստով շատ մոտ՝ «գլխավոր, տեր, առաջնորդ,
երկնային հայր, աստված» փմաստները:

Այսպիսով, Արարատյան քաղաքականության դիցարանի վերլուծությունը
ակնբախորեն ցույց է տալիս նրա հայկական բնույթը, և դա այդ պետության՝
հայկական լինելու ևս մի ապացույցն է⁶¹:

ПАНТЕОН АРАРАТСКОГО ЦАРСТВА В СВЕТЕ СРАВНИТЕЛЬНОЙ МИФОЛОГИИ

В. М. ТЕРТЕРЯН

Р е з ю м е

В современной арменистике указано много примеров сходства между армянскими и инородными языческими богами и представлениями. Разумеется, что такие общности существовали и в эпоху Араратского государства. Г. Б. Джаукян в своих исследованиях выявил из этого пантеона целую группу подлинно армянских божеств. Сопо-
ставление данных сравнительной мифологии и ономастики показывает, что в пантеоне нашло отражение несколько десятков языческих богов армянского происхождения.

54 ՀԱՐ, հ. 3, Երևան, 1977, էջ 614:

55 Մ. Բոտլինիկ, նշվ. աշխ., էջ 190:

56 ՀԱՐ, հ. 3, էջ 601:

57 Հայաստանի պատմություն, էջ 225:

58 Հայոց լեզվի պատմություն, էջ 394:

59 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1973, էջ 132:

60 Հայոց լեզվի պատմություն, էջ 409:

61 Հայոց դիցարանում տեղ գտած մոտ. քսան օտար աստվածների առկայության մեկ-
նարանությունը տե՛ս Վ. Տերտերյան, Հայոց հնագույն դիցարանը (Սովետական Հայաս-
տան, 1988, № 6, էջ 32), նույնի՝ Հայկական հեթանոսական աստվածությունները (Վերա-
ծնված Հայաստան, 1990, № 6, էջ 61):